

Լեզվաբանություն և բանասիրություն

Սոնա Հակոբյան

*ԵՄՀ Օտար լեզուների և գրականության ամբիոնի վարիչ,
Նորարական Կրթական Հիմնադրամ, TOEFL & IELTS ինստրուկտոր,
Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաառարակագիտական
համալսարանի Անգլերենի ամբիոնի դոկտորնապ,
բանասիրական գիտությունների թեկնածու*

1915թ. ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԴՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ամերիկայի Միացյալ Նահանգները, զբաղեցնելով առաջնային դիրք պետությունների քաղաքական դիրքորոշումներում, քաղաքական ու պաշտոնական տարբեր փաստաթղթերով և ուղերձներով բազմիցս անդրադարձել ու անդրադառնում է ցեղասպանության իրադարձություններին: 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ ամերիկյան քաղաքական խոսույթում ներկայացված հայտարարությունների տողատակերում թաքնված իմաստների գիտական բացահայտումը և դրանց իմաստաբանական ուսումնասիրությունը առաջին անգամ ներկայացվում է իրադարձությունների իմաստաբանության լույսի ներքո: Սույն հոդվածը փորձ է անում ներկայացնել 1915 թ. իրադարձությունների արտապատկերումը քաղաքական խոսույթում իրադրային վերլուծության համատեքստում: Հոդվածում քննվում է բարդ իրադարձություն հասկացությունը՝ որպես վերլուծության մեխանիզմ և փորձ, է արվում լավագույնս ներկայացնել իրադարձությունների խորքային կաղապարումը և պատճառական բայերի իրադրային տարրաբաշխումը: Հոդվածը միտված է հրնթացս ներկայացնելու ԱՄՆ քաղաքական խոսույթը՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ պաշտոնական պաշտոնա-

կան հայտարարությունների և ամենամյա ապրիլքսանչորսյան նախագահական ուղերձների խոսույթային կաղապարման համատեքստում:

Հիմնաբառեր. իրադարձություն, իրադրային վերլուծություն, բարդ իրադարձություն, պատճառականություն, բայական տարրաբաշխում, ԱՄՆ խուսանավող քաղաքական խոսույթ:

Ներածություն

Այսօր լեզվաբանական տեսություններում իրադարձությունները դիտվում են որպես քերականական միավորներ, իսկ լեզուն իրադարձությունները քերականացնում է ամենատարբեր միջոցներով: Ենթադրվում է, որ իրադարձությունները կազմված են սկզբնակետից, տևողությունից և ավարտվածությունից: Իրադարձություններն ամենաընդհանուր իմաստով ներկայանում են որպես իրերի ու դեպքերի հաջորդականություն, որ տեղի է ունեցել և ունենում իրական աշխարհում: Իրադարձությունները հասարակական կամ անձնական կյանքում տեղի ունեցած կարևոր եղելություններ ու պատմական իրողություններ են: Ըստ Ստենֆորդ համալսարանի կայքում գետեղված առցանց *փիլիսոփայական հանրագիտարանի*¹ իրադարձությունները իրական կյանքում տեղի ունեցող երևույթներն են՝ հարսանիք, փոթորիկ, պայթյուն, կայծակ, երկրաշարժ կամ պարզապես ժպիտ, քայլ ու երգ: Մտածելով ժամանակային, պատճառային ու նպատակային երևույթների մասին՝ անհրաժեշտություն է առաջանում դրանք վերլուծելու և ուսումնասիրելու հենց իրադարձությունների հայեցակետից: Լեզվաբանական այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բայի ժամանակը, կերպը, վերագրվում են իրադարձություններին և դրանց կառուցվածքին (Stanford Encyclopedia of Philosophy)¹:

Իրադարձությունների՝ որպես քերականական միավորների հանդես գալը պայմանավորված է իմաստաբանական և շարահյուսական մոտեցումների փոխազդեցությամբ և համակցմամբ: Հետազոտությունները զարգացնում են այն գաղափարը, որ բայիմաստը կարող է վերլուծվել իրադարձության կառուցվածքային նկարագրության միջոցով, որն էլ փաստում է, որ գոյություն ունեն բարդ իրադարձություններ՝ կազմված արտաքին ու ներքին իրադարձություններից: Մույն հոդվածում ներկայացվում է ցեղասպանություն երևույթը նկարագրող այն բայերի պատճառական տարրաբաշխումը, որոնք տարիներ շարունակ ընդհանրականորեն կիրառվում են ԱՄՆ ապրիլքսանչորսյան ուղերձներում և հայտարարություններում:

¹ Ծանոթագրություն– <https://plato.stanford.edu/entries/events/> First published Mon Apr 22, 2002; substantive revision Wed Aug 27, 2014 Փիլիսոփայական առցանց հանրագիտարան

Տեսական հիմքերը

Իրադարձության՝ որպես լեզվական միավորի հանդես գալն ի սկզբանե ունեցել է փիլիսոփայական հիմք: Դեռևս Արիստոտելն իր հայտնի «Մետաֆիզիկա» աշխատության մեջ խոսում էր իրադարձությունների տիպաբանության մասին՝ հիմնվելով դրանց ներքին ժամանակային կառուցվածքի վրա: Արիստոտելն առանձնացնում էր իրականություն (energeia) և գործողություն (kinesis) հասկացությունները: Այս բաժանումը թերևս վերջնանապատակ ունեցող և չունեցող իրադարձությունների սահմանազատումն է: *Սովորել, քայլել, կառուցել* գործողությունները չունեն վերջնակետ ու վերջնանապատակ, այսինքն՝ ոչ ամբողջական գործողություններ են, իսկ իրականությունն արտահայտում է «իրերի գոյությունը»: Ի հակադրություն գործողությունների՝ իրականությունն արտահայտող իրադարձությունները մշտապես գոյություն ունեցող էություններ են. «Մենք *լրեսնում, հասկանում, մտածում ենք*. սրանք, սակայն, չեն նույնանում *սովորում ենք, քայլում ենք, կառուցում ենք* գործողությունների հետ» (Aristotle, Met, 1048b18, էջ 37):

20-րդ դարի փիլիսոփայական գրականության մեջ արիստոտելյան այս տեսակետների շարունակությանը հանդիպում ենք Զ. Ռայլի աշխատություններում: Զ. Ռայլը գտնում է, որ ոչ բոլոր նախադասություններն են արտահայտում գործողություն. «Ասել, որ մարդը գիտի ինչ-որ բան կամ ձգտում է անել ինչ-որ բան, չի նշանակում, որ նա որոշակի պահի այդ ինչ-որ բանն անելու գործընթացի մեջ է, այլ նա կարող է անել որոշակի բաներ, երբ ցանկություն ունի կամ հակված է այդ բաներն անելու» (Ryle, 2002 էջ 327):

Ամերիկացի լեզվափիլիսոփա Դ. Դեյվիդսոնն առաջիններից էր, որոնք խոսեցին իրադարձությունների՝ որպես լեզվական երևույթների մասին: Դ. Դեյվիդսոնի հիմնական հարցադրումը ներառում էր այն գաղափարը, թե ինչպես են բաղադրվում գործողություն ցույց տվող նախադասությունների ճշմարտացիության պայմանները, և քանի որ նա իր հարցադրումը կապում էր ճշմարտացիության պայմանների հետ, հետևաբար չէր կարող գործ չունենալ նախադասության տրամաբանական կողմի հետ: Ելնելով այս կետից՝ Դ. Դեյվիդսոնն իր աշխատանքը ներկայացնում է «Գործողություն ցույց տվող նախադասությունների տրամաբանական ձևը» վերնագրամբ, որտեղ բացահայտում է՝ ինչ է ասել տրամաբանական ձև, և ներկայացնում մի շարք պարզաբանումներ: Դ. Դեյվիդսոնն իր հողվածում իրադարձությունները մեկնաբանում է որպես լեզվական միավորներ և լեզվաբանությունը ներկայացնում տրամաբանորեն՝ ներդնելով տրամաբանական մի ձև, որը լայնորեն կիրառվում է լեզվաբանության մեջ: Նա առաջ է քաշում գործողություն ցույց տվող նախադասությունների տրամաբանական նկարագրություն, որը համապատասխանում է պրեդիկատների ավանդական տրամաբանական նկարագրությանը, որում բայը մեկնաբանվում է որպես բազմատեղանի պրեդիկատ (Davidson, 1967, էջ 102): Գ Բրուտյանն իր պրեդիկատների տրամաբանության մեջ պրեդիկատ ասելով հասկանում է այն, ինչ ասվում է սուբյեկտի մասին տվյալ ասույթում: Նա ևս առաջ է քաշում


մեկտեղանի, երկտեղանի, երեքտեղանի պրեդիկատ հասկացությունները՝ կախված սուբյեկտների քանակից (Բրուտյան 1987, էջ 528): Դ. Դեյվիդսոնն իր հերթին բայական պրեդիկատին ավելացնում է լրացուցիչ արգումենտ, որի հետևանքով գործողություն ցույց տվող բայը մեկնաբանվում է ոչ թե որպես մեկտեղանի, այլ երկտեղանի, երեքտեղանի պրեդիկատ, իսկ նոր լրացուցիչ արգումենտը (անկախ փոփոխական) *e* (event «իրադարձություն») փոփոխական մեծությունն է (Davidson, 1967, էջ 100–105): Նա իր հիմնական դրույթները ներկայացնում է հետևյալ նախադասության հիման վրա. *Strange goings on! Jones did it slowly, deliberately, in the bathroom, with a knife, atmidnight. What he did was butter a piece of toast. (Տարօրինակ բաներ են կատարվում: Ջոնն այդ բանն անում էր դանդաղ, մտածված, լոգասենյակում, դանակով, կեսգիշերին)* (Davidson, 1967, էջ 90):

Դիմելով սույն նախադասության տրամաբանական նկարագրությանը՝ նկատի է առնվում, որ կա «մի x գործողություն, այդ x գործողությունը Ջոնսը կատարում է դանդաղ, մտածված, լոգարանում և այլն»: Ահա այստեղ է, որ հարց է առաջանում կիրառել որևէ եզրույթ տրամաբանական x-ի համար: Դ. Դեյվիդսոնը նշում է, որ գործողություն ցույց տվող բայերը պարունակում են հավելյալ թաքնված իրադրային արգումենտ, և այս հայեցակետից անցողական բայը ներկայացնում է եռատեղ հարաբերություն, այն է՝ ենթակա, ուղիղ խնդիր և իրադրային արգումենտ:

Կարող ենք ասել, որ իրադարձությունները *իրեր* են, ինչպես առարկաները. նրանց կարելի է հաշվել, նրանք կարող են տեղայնացվել տարածության և ժամանակի մեջ: Այստեղից էլ կարող ենք եզրակացնել, որ իրադարձության համակարգվածությունը և իրադարձության կառուցվածքը բնութագրվում են տվյալ նախադասության մեջ տեղակայված արգումենտներով: Իմաստաբանական հայեցակետից արգումենտը ներկայացնում է իրադարձության մասնակիցներին՝ նշված կոնկրետ պրեդիկատով, և հանդես է գալիս որպես իրադրային կառույցի նկարագրման տեսակ: Շարահյուսական հայեցակետից արգումենտները ներկայացնում են այն նվազագույն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է շարահյուսական միավորները բնութագրելու համար, և հանդես են գալիս որպես շարահյուսական ենթակարգայնացման տեսակ: Այստեղից գալիս ենք այն մտքին, որ արգումենտային կառույցը դիտվում է որպես մի կապ իմաստաբանական և շարահյուսական պրեդիկատների միջև:

Այս տեսակետից էլ պետք է հիշատակել մասնագետների այն դրույթը, որ արգումենտային կառույցի միջոցով տարբերակվում են մի շարք արգումենտների մասին եղած տեղեկատվությունը, շարահյուսական տեսակը և նրանց աստիճանակարգային կազմավորվածությունը, որն էլ իր հերթին անհրաժեշտ է՝ այն շարահյուսական կառույցին հարաբերակցելու համար (Rappaport and Levin 1998, էջ 98): Հետազոտությունները ցույց են տալիս, որ բարդ իրադարձությունները կազմված են ներքին և արտաքին իրադարձություններից. արտաքին իրադարձությունը կապված է պատճառականության (causation) և ներգործության (agency) հետ, իսկ ներքին իրադար-

ծությունը կապված է իրավիճակի փոփոխության կամ նպատակաուղղվածության (telicity) հետ: Այս երևույթի մասին լավագույնս անդրադարձել են ոլորտի հետազոտողներ Ք. Թենին և Զ. Պուստեյովսկին հետևյալ գծապատկերով.



Գծապատկեր 1.Արտաքին և ներքին իրադարձություններ
(Tenny & Pustejovsky 2000, էջ 7)

Այս տեսանկյունից “John sliced the bread“ (Ջոնը կտրատեց հացը) նախադասության մեջ պրեդիկատը բաղկացած է ներքին և արտաքին իրադարձություններից: Ներքին իրադարձությունը նպատակ արտահայտող իրադարձությունն է, որում *հացը* ենթարկվում է իրավիճակի փոփոխության: Իսկ արտաքինն այն իրադարձությունն է, որում Ջոնը հանդես է գալիս որպես ագենտ (իրադարձության կատարողը): Եվ քանի որ արտաքին իրադարձությունը պատճառ է հանդիսանում ներքինի համար, ապա դա հարաբերվում է պատճառականության հետ: Պատճառականություն ասելով հասկանում ենք մի երևույթ, երբ պատճառը որոշակի պայմանների առկայության դեպքում անհրաժեշտաբար առաջ է բերում մյուսը՝ հետևանքը (կամ գործողությունը): Պատճառականությունը լեզվաբանորեն ներկայացվում է որպես հարաբերություն կաժմ երկու պրոպոզիցիոնալ արտահայտությունների, կաժմ երկու իրադարձությունների, կաժմ էլ ագենտի և իրադարձության միջև (Tenny & Pustejovsky 2000, էջ 8):

Արգումենտային կառույցը նկարագրում է այս կամ այն պրեդիկատի թեմատիկ (իմաստաբանական) բովանդակությունը: Արգումենտային կառույցի վերաբերյալ հիմնական մոտեցումները թեմատիկ արգումենտները դիտարկում են որպես պարզ փոփոխակներ, որոնց մեկնաբանությունը միջամտվում է պրեդիկատների *բառային հասկացության կառույցով* (Lexical Conceptual structure): Տարրաբաշխման գաղափարն առաջարկել է Զ. Գրիմշոուն, որը Ռ. Ջեկենդոֆֆի թեմատիկ աստիճանակարգին համապատասխան լավագույնս ներկայացնում է արգումենտները որպես անանուն փոփոխակներ՝կաղապարված իրենց թեմատիկ կողմով (Grimshaw, 1990, էջ 10; R. Jackendoff 2000, էջ 56–70): Յուրաքանչյուր արգումենտի մեկնաբանությունը և դրան զուգորդված թեմատիկ դասը հնարավոր է վերականգնել միայն պրեդիկատի *բառային հասկացության կառույցով*:

Սերող իմաստաբանության ավանդույթը բացահայտել է այն գաղափարը, որ բայերին հատուկ կառուցվածքը համապատասխանում է նախադա-

սության շարահյուսական կառուցվածքին: Ջ. Սքրոլին նշում է, որ, օրինակ, *համոզել (persuade)* բայը պետք է տարրաբաշխվի մի կառույցի, որը բաղկացած է այնպիսի պրեդիկատներից, ինչպիսիք են DO, CAUSE, BECOME, INTEND պրեդիկատները (G. McCawley, 1971, էջ 54): Հետագայում Դ. Դոուրին զարգացնում է մի շարք մոտեցումներ սերող իմաստաբանության և Ռ. Մոնտեգյուի քերականության հայեցակետից: Իրադարձային դասերն ընդհանուր առմամբ բնութագրել է հասանելի պրեդիկատների միջոցով. DO-ն գործողությունների, BECOME-ը նպատակին հասած գործողությունների CAUSE BECOME-ը կատարված և ավարտված գործողությունների համար (Dowty 1979, էջ 124):

Վերը ներկայացված հետազոտությունները զարգացնում են այն գաղափարը, որ բայիմաստը կարող է վերլուծվել իրադարձության կառուցվածքային նկարագրության միջոցով, որն էլ փաստում է, որ գոյություն ունեն բարդ իրադարձություններ՝ կազմված արտաքին ու ներքին իրադարձություններից: Սա առավել պատկերավոր ներկայացվում է ներքոնշյալ վերլուծության մեջ:

ԱՄՆ պաշտոնական հայտարարությունների առանձնահատկությունները 1915 իրադարձությունների համատեքստում

Ինչպես տեսանք, իրադարձությունները հանդես են գալիս որպես քերականական միավորներ՝ լեզվական որոշակի միջոցներով ներկայացվելով տեքստում: Լեզվական տեքստը հանդես է գալիս որպես մակերեսային կառույց, որը փոխակերպվելով դառնում է ձևականացված իմաստատրամաբանական կաղապար, որի շնորհիվ բացահայտվում է տվյալ մակերեսային կառույցի իմաստային արտապատկերը: Տեքստի ընկալումն էլ հետևաբար կատարվում է հենց խորքային կառույցի հիման վրա՝ հաշվի առնելով չարտահայտված ենթադրյալ և համատեքստային նշանակությունները:

Ամերիկյան քաղաքական խոսույթում 1915 թվականի իրադարձությունների խորքային արտապատկերումն ունի հետևյալ տեսքը՝

1. խոսքային իրադարձության նկարագրություն,
2. հիշատակվող իրադարձության նկարագրություն,
3. հղում նախորդ հայտարարություններին,
4. հայ-թուրքական հարաբերությունները,
5. Հայաստանի և հայ համայնքի ավանդը,
6. հայության գնահատականը:

Խոսքային իրադարձության նկարագրությունը հստակեցնում է այն պայմանները, որոնց ներքո հիշատակվում և գնահատվում է պատմական իրադարձությունը: Այն ներկայացնում է քաղաքական գործի կամ խմբի գործողությունները տվյալ իրադարձության շրջանակներում՝ պարզաբանելով վերջինիս հետ կապված մի շարք հանգամանքներ՝ համատեքստ, ժամանակ, հասցեատերեր, նպատակներ, դրդապատճառներ, սպասելիքներ, գնահատականներ ու վերաբերմունք: Խոսքային իրադարձության մեջ

տարբեր հայեցակետերից հստակեցվում ու զանազանվում են հայտարարության հեղինակների խոսքային գործողությունները:

Խնդիրն առավել բարդանում է արդեն հիշատակվող իրադարձության նկարագրության հարցում: Այստեղ **խուսանավող խոսույթի** զանազան դրսևորումները թերևս ներկայանում են լեզվական ամենաբարդ ձևերի համակցմամբ՝ խորքային կառույցի բացահայտմամբ: ԱՄՆ սենատի տարբեր վճիռ-որոշումներում 1915 թվականի իրադարձությունների լեզվաբանական նկարագրությունը ենթադրում է տվյալ վճիռ-որոշման խոսույթում տեղ գտած պատմական իրադարձությունների իմաստաշարահյուսական և տրամաբանական արտապատկերում՝ հիմք ընդունելով այն տեսակետը, որ բարդ իրադարձությունները բաղկացած են արտաքին ու ներքին իրադարձություններից: Հիշենք, որ արտաքին իրադարձությունը կապվում էր միջոցի և պատճառականության հետ, այսինքն՝ իմաստաբանական ազենտը իրականացնում է որոշակի գործողություն տրամաբանական CAUSE (պատճառել) պրեդիկատի արգումենտում, որի հետևանքային գործողությունը ներկայացվում է ներքին իրադարձության մեջ, և որի արդյունքում օբյեկտը ենթարկվում է իրավիճակի փոփոխության: Գործողությամբ ներկայացված ազենտի և պացիենտի հարաբերությունը ներկայանում է շարահյուսական կառուցվածքային ծառի միջոցով, որը ներմուծել է Ջ. Մքքոլին (McCawley, 1968, էջ 73):

Դիտարկելով իրադարձությունները՝ որպես լեզվաբանական միավորներ՝ պարզ է դառնում, որ մեր շուրջը կատարվող դեպքերը, պատմության դրվագները իրադարձությունների պարզագույն օրինակներ են, և որ այսօր լեզվաբանական տեսություններում իրադարձությունները դիտվում են որպես քերականական միավորներ: Ստացված տեսական արդյունքների հիման վրա մեր կողմից առանձնացվում է բարդ իրադարձությունների գոյությունը, որը արտացոլվում է մեր վերլուծության մեջ:

ԱՄՆ սենատի վճիռ-որոշումներում, հուշագրություններում ու նախագահական ուղերձներում ներկայացված փաստերը՝ մարդկանց սարսափելի կացությունը, 1915 թվականին տեղի ունեցած իրադարձությունների դաժանությունն ու անգբություններն արտահայտող գործողությունները իրենց արտապատկերումն են ստանում և կարող են բացահայտ (explicit) ձևով նկարագրվել իրադարձությունների կառուցվածքային և իմաստաբանական վերլուծությամբ: Այս առումով կիրառում ենք նաև իրավիճակային քերականության որոշ սկզբունքներ, որոնք բացահայտում են, թե ինչպես են մակերեսային կառույցները մեկնաբանվում խորքային կառույցում: Նախադասության իմաստը և նշանակությունը սահմանվում են համատեքստային այնպիսի հատուկ հատկանիշով, ինչպիսին է տեղագրական կառուցվածքը՝ ասույթի գործողության ժամանակն ու վայրը:


ԱՄՆ պաշտոնական հայտարարությունների վերլուծություն

ԱՄՆ քաղաքական խոսույթում 1915 թվականի իրադարձությունները ներկայացնող բառիմաստների ուսումնասիրության ներքո և բառային

(իրադրային) տարրաբաշխման արդյունքում թերևս հնարավոր է դառնում վեր հանել խուսանավող խոսույթի առանձնահատկությունները: Ուսումնասիրելով և կիրառելով լեզվաբանական և իմաստաբանական նորագույն մեթոդները՝ փորձենք վերհանել ԱՄՆ՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական խոսույթի իմաստաբանական կառուցվածքը:

ՕՐԻՆԱԿ 1.

Սենատի 12-րդ համատեղ որոշման մեջ ներկայացվում են իրադարձության հետևյալ արտապատկերումները.




Գծապատկեր 2 Իրադրային վերլուծություն

Հիմա (այդ ժամանակ) Հայաստանում առկա է տառապանք, անապահովություն (The people of the United States are deeply impressed by **the deplorable conditions of insecurity, starvation and misery now prevalent in Armenia** (US Senate concurrent Resolution 12; (Միացյալ նահանգների ժողովուրդը խորապես ցնցված է անապահովության, քաղցի և աղետի այն սարսափելի կացությամբ, որը հիմա առկա է Հայաստանում. *Սենատի 12-րդ համապետեղ որոշում, փետրվարի 10, 1916 թվական*): Իրադարձությունը ներկայացված է *քաղցել (to starve)* բայով: Ընդարձակ իրադրային կառույցում բայի իրադրային փոփոխակը սահմանվում է առանձին արգումենտային տրամաբանական չափորոշչի միջոցով և կոնկրետ տրամաբանական պրեդիկատով: CAUSE պրեդիկատի առաջին արգումենտում ներկայացվում է *քաղցի* իրավիճակը, երկրորդ արգումենտում՝ վայրը, որտեղ առկա է այդ իրավիճակը, իսկ արդեն սովերային (թաքնված) արգումենտում ունենում ենք *քաղցած ժողովուրդ՝ X CAUSE y(Armenian people) BECOME (starved) e*: Իմաստաբանական ազենտը մեկ շարահյուսական մակարդակով իջնում է, այսինքն՝ գլխավոր անդամից դառնում է երկրորդական, և հանգում ենք իրավիճակային քերականության այն մտքին, որ ցուցային արտահայտությունները կարող են ներկայացնել ինչպես գործողության վայրն ու ժամանակը, այնպես էլ հասարակական դերեր ու հարաբերություններ: Այնուհետև ներկայացվում է անապահովության իրադարձությունը. Ստեղծված անապահով իրավիճակը ներկայացրել ենք *վտանգել (to endanger)* բայով: Ընդարձակ իրադրային կառույցում վերը նշված բայի իրադրային

փոփոխակները ևս ներկայացնում ենք տրամաբանական CAUSE (ՊԱՏՃԱՌԵԼ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ) և BECOME(ԴԱՌՆԱԼ) պրեդիկատներով՝ տարրաբաշխելով բայինաստը ավելի խորքա-յին բաղադրիչների: Նույն իրադարձության մեջ ներկայացված է նաև թշվառության, տառապանքի իրավիճակը: *Հայաստանում հիմա առկա է թշվառության/տառապանքի իրավիճակ*: Իրադարձային կաղապարում սույն պատմական իրադարձությունները ներկայանում են որպես կոտորածներ և այլ դաժանություններ ու անգթություններ, որոնց հետևանքով տառապել են հայերը:

Որոշակի պարզաբանումներ մտցնելու համար հարկ ենք համարել նաև անդրադառնալ թեմային առնչվող ականավոր հուշագրություններին և ամենամյա ապրիքսանչորայան ուղերձներին: **Հ. Հովվերի** հուշագրությունների ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ իրադարձությունը ներկայացվում է բարդ իրադարձությամբ՝ արտաքին և ներքին հարաբերություններով: The association of Mount Ararat and Noah, the staunch Christians who were massacred periodically by the Mohammedan Turks, and the Sunday School collections over fifty years for alleviating their miseries—all cumulate to impress the name Armenia on the front of the American mind (Արարատ լեռան և Նոյի մասին պատկերացումները, մահմեդական թուրքերի կողմից կոտորված հավատացյալ քրիստոնյաները և շուրջ հիսուն տարվա Կիրակնօրյա դպրոցի հավաքածուները, որոնք մեղմում են ցավը, ընդհանրացվում են հայի անունը ամերիկյան մտածելակերպի մեջ տպավորելու համար): Արտաքին իրադարձության CAUSE պրեդիկատի արգումենտում հստակորեն ներկայացված է պատճառ հանդիսացող արգումենտը՝ ազենտը, որի գործողությունների հետևանքով հավատացյալ քրիստոնյաները պարբերաբար կոտորվում են մահմեդական թուրքերի կողմից: Այստեղ CAUSE և BECOME պրեդիկատների հետ կիրառության մեջ կարող ենք դնել Ռ. Ջեկենդոֆֆի կողմից առաջադրած DO պրեդիկատը, այսինքն՝ մահմեդական թուրքերը կատարում են կոտորածներ՝ պատճառ հանդիսանալով, որ հավատացյալ քրիստոնյաները մահանան:

Massacre-become not alive




Գծապատկեր 3. Կառուցվածքային ծառ

ԱՄՆ նախագահներից առաջինը թերևս **Զ. Քարտերն** էր, որ սկսեց անդրադառնալ ցեղասպանության թեմային Վ. Վիլսոնի՝ կոնգրեսում


տապալած նախաձեռնությունից հետո: Նրա ուղերձի միայն մի նախադասությունն է հպանցիկ ներկայացնում ցեղասպանության իրադարձությունները. But it is generally not known in the world that in the years preceding 1916, there was a concerted effort made to eliminate all the Armenian people (Աշխարհը տեղյակ չէ, որ 1916 թվականի նախորդող տարիներին դա եղել է հայ ժողովրդին ոչնչացնելու կազմակերպված փորձ): Իրադարձությունը ներկայացվում է ոչնչացնել(to eliminate) բայով, որի համար ընտրել ենք to stay (մնալ) բայը՝ հիմք ընդունելով *Նոր Վերսալերի բառարանը* և *Ռոժեի գանձարատարանը*:

ՕՐԻՆԱԿ 2

Նախագահ Զ. Քարտերի ուղերձի իրադրային արտապատկերումը



Տվյալ բարդ իրադարձության մեջ արտաքին իրադարձությունը ներկայացնում են 1916 թվականի նախորդող տարիները, այսինքն՝ կրկին ազենտի դերում հանդես է գալիս ժամանակի պարագան, և այդ ժամանակահատվածը պատճառ է հանդիսանում, որ հայ ժողովուրդը ոչնչանա: Ներկայացնենք իրադարձությունը շարահյուսական կառուցվածքային ծառով.



Գծապատկեր 4. Կառուցվածքային ծառ


Փաստորեն սույն իրադրային վերլուծության մեջ ևս CAUSE պրեդիկալատի արգումենտում ժամանակի պարագան հանդես է գալիս որպես ազենտ, և հենց այդ ժամանակաշրջանը պատճառ է հանդիսանում, որ հայ ժողովուրդը ոչնչանա: Ռ. Ռեյգանի հայտարարության մեջ իրադարձությունները ներկայացվում են ընդհանրացված ենթաիրադարձություններով՝ միլիոնավոր մահեր, անմարդկային դիակիզումներ, գազային հարձակումներ. The

millions of death, the gas chambers, the inhuman crematoria and the thousands of people who somehow survived with lifetime scars are all now part of the conscience of history. Like the genocide of the Armenian before it, and the Genocide of Cambodians which followed it—and like too many other such persecutions of two many other peoples—the lessons of the Holocaust must never be forgotten (Կորցվեցին միլիոնավոր կյանքեր, գազի պալատներ, անմարդկային դիակիզարաններ և հազարավոր մարդիկ, որ ինչ–որ կերպ գոյատևել են կյանքի խութերում, իսկ այսօր պատմության խիղճն են: Ինչպես մինչ այդ հայերի ցեղասպանությունը, դրան հաջորդող կամբոջիացիների ցեղասպանությունը և շատ այլ նմանատիպ հետապնդումները տարբեր ժողովուրդների նկատմամբ, այնպես էլ Հոլոքոստի դասերը երբեք չեն մոռացվի): Ելույթը ներկայացնող իրադրային կադապարը ամբողջական չէ: Այսինքն՝ CAUSE պրեդիկատն ու դրա արգումենտը բացակայում են. տվյալ իրադարձության մեջ չկա արտաքին՝ պատճառ հանդիսացող ներգործող իրադարձություն, իսկ ներքին իրադարձության մեջ թեման՝ մի դեպքում հայ ժողովուրդը, մյուսում՝ կամբոջիացիները դառնում են ցեղասպանության գոհ: Այսինքն՝ ունենք պարզ իրադարձություն, որում ներկայացված չեն գործողություն կատարողներ ու իրավիճակի փոփոխության պատճառ հանդիսացողներ: Այնուամենայնիվ, Ռ. Ռեյզանի ուղերձում ընդգրկված են երեք իրադարձություններ՝ Հոլոքոստ, Հայոց ցեղասպանություն և կամբոջացիների ցեղասպանություն: Հատկանշական է, որ Ռ. Ռեյզանն օգտագործում է «ցեղասպանություն» եզրույթը, և ինչպես նշում է Ս. Զոլյանը, ցեղասպանության մասին առանց «ցեղասպանություն» բառի խոսույթին փոխարինելու է գալիս «ցեղասպանություն» բառը առանց ցեղասպանության խոսույթի (Զոլյան 2015, 22):

Արդեն 90-ականներին ներկայացվող **Զ.Բուշի** ուղերձի իրադրային կադապարը ներկայացնում է 1988 թվականի երկրաշարժի դեպքերը և 1915–1923 թվականների սարսափելի կոտորածները. Those tragedies include the Earthquake of 1988, and most prominently, the terrible massacres suffered in 1915–1923 at the hands of the rulers of the Ottoman Empire (Այս բազմաթիվ ողբերգությունների շարքում են 1988 թվականի երկրաշարժը, և հատկապես 1915–1923 թթ. սարվապալի կոտորածները Օսմանյան կայսրության ղեկավարների կողմից): Նախագահ Զ. Բուշը իր ելույթում խոսում է 1915–1923 թվականների իրադարձությունների մասին, որոնք պատճառ են հանդիսացել սարսափելի կոտորածների և տառապանքների համար, իսկ այդ իրադարձություններն իրականացվել են Օսմանյան կայսրության ղեկավարների կողմից: Այսինքն՝ արտաքին իրադարձության մեջ CAUSE պրեդիկատի արգումենտում ազենտի դերում հանդես են գալիս ժամանակի պարագան և Օսմանյան կայսրության ղեկավարները:

ՕՐԻՆԱԿ 3.

Նախագահ Զ. Բուշի ուղերձի իրադրային արտապատկերումը



Ի տարբերություն Զ. Բուշի՝ նախագահ Բ. Քլինթոնի ուղերձները շատ հպանցիկ են անդրադառնում 1915 թվականի իրադարձություններին (On this solemn day, I join Armenians from around the world in remembering the victims of the 1915 massacres in the Ottoman Empire (Հիշատակման այս հանդիսավոր օրը միանում եմ աշխարհի բոլոր հայերին՝ վկայակոչելով 1915 թվականի կոտորածների զոհերին Օսմանյան կայսրությունում): Կարող ենք ասել, որ բարդ իրադարձության մեջ զոհերը հանդես են գալիս որպես օբյեկտներ, որոնք կոտորվում են, իսկ CAUSE պրեդիկատի արգումենտում *Օսմանյան կայսրությունում* տեղի պարագան և *1915 թվական* ժամանակի պարագան հանդես են գալիս որպես ազենտներ և զոհերի կոտորման պատճառներ: Այստեղ ունենում ենք *to massacre* (կոտորել) բայով ներկայացված վերոնշյալ օրինակների շարահյուսական և իմաստաբանական պատկերը: Նախագահի մնացած ելույթները համապատասխանաբար ներկայանում են նույն կերպ՝ փոխելով կոտորածի իրադարձության արտահայտման ազենտները: Այսպես օրինակ՝ մի տեղ ազենտը Օսմանյան կայսրության վերջին օրերն են, մյուս տեղում 1915-1920 թթ. ժամանակի պարագաները և այլն: Հաջորդիվ նախագահ Բ. Քլինթոնը կոչ է անում կառուցելու մի աշխարհ, որում նման իրադարձություններ պարզապես անհնարին կլինեն: Խոսելով իր և Միացյալ Նահանգների անունից՝ նախագահ Քլինթոնը կարծես հանդես է գալիս որպես հաշտարար և փորձում դրական ազդեցություն ունենալ ունկնդիրների վրա: Սա ապացուցում է նրա ելույթի վերջին նախադասությունը. On behalf of the American people, I extend my best wishes to all Armenians on this solemn day of remembrance (Ամերիկացիների անունից լավագույն մաղթանքներս եմ հղում բոլոր հայերին՝ հիշատակման այս պահին):

Կրտսեր Զ. Բուշի նախագահական ուղերձները ևս աշխատում են վերոնշյալ իրադրային կաղապարով: Ըստ նախագահի ելույթների՝ 1915 թվականի իրադարձությունների վերաբերյալ խոսույթը ներառում է բարդ իրադարձություններ, որոնք կազմված են և՛ արտաքին, և՛ ներքին իրադարձություններից: Ամենամյա ելույթներում ներկայացված իրադարձությունների մեջ CAUSE պրեդիկատի արգումենտում փաստորեն կրկին ժամանակի պարագան հանդես է գալիս ազենտի դերում և պատճառ հանդիսանում մի շարք իրավիճակային փոփոխությունների, ըստ որոնց՝ 1,5 միլիոն հայ

օրյեկտը «դառնում է տարագրված, բնաջնջված, սպանված»:

Չնայած աշխարհի սպասելիքներին ու տված խոստումներին՝ նախագահ Բ. Օբամայի ուղերձները կրկնում են նախորդներին՝ ստանալով գրեթե նույն արտապատկերումը: Բոլոր ուղերձները ներկայացվում են մի բարդ իրադարձությամբ. 1.5 million Armenians were massacred or marched to their death in the final days of the Ottoman Empir (1,5 միլիոն հայեր դաժանորեն սպանվեցին և ենթարկվեցին մահվան երթերի): Each year, we pause to remember the 1.5 million Armenians who were subsequently massacred or marched to their death in the final days of the Ottoman Empire (Ամեն տարի այս օրը, մենք կանգ ենք առնում հիշատակելու 1,5մլն. հայերին, որոնք կոտորվել կամ ենթարկվել են մահվան երթերի Օսմանյան կայսրության վերջին օրերին): Բարդ իրադարձության մեջ 1,5 մլն. հայեր իրադարձության արտաքին ու ներքին հարաբերությունների դրսևորման արդյունքում կոտորվում, ջարդվում և մահան երթերի են ենթարկվում: Արտաքին իրադարձության մեջ կրկին CAUSE պրեդիկատի արգումենտում *Օսմանյան կայսրության վերջին օրերը* ժամանակի պարագան հանդես է գալիս որպես ազենտ և պատճառում 1,5 մլն. հայերի կոտորածներ ու ջարդեր:

Ինչ վերաբերում է ներկայիս նախագահ Դ. Թրամփի կիրառած ռազմավարություններին, պետք է նշել, որ վերջինս բացահայտ կրկնում է Բ. Օբամային՝ իրադարձությունները անվանելով Մեծ Եղեռն, վկայակոչելով կոտորածները և հայության ունեցած ավանդը: Վերջինս արտաքին իրադարձությունը կաղապարում է *Օսմանյան կայսրության վերջին տարիներ* արտահայտությամբ (final years of the Ottoman Empire) :

Ինչպես պարզ է դառնում, 1915 թվականի իրադարձությունները հիմնականում ներկայացվում է **սպանել** կարգի բայերով: Այդ բայերը հարում են **մահ** հասկացության: *Մահ*-ը պարզ իրավիճակային պրեդիկատ է, մինչդեռ դրանից սերած բայերը անցողական պրեդիկատներ են, որոնց կատարած գործողության հետևանքով ստեղծվում է մահվան իրավիճակ: Իրադարձությունների կարգայնացման տեսանկյունից պատճառական հարաբերությունները շատ կարևոր դեր են կատարում վերլուծության գործընթացում: Պատճառական հարաբերություններում կարևոր է պատճառական փոխակարգությունը, այսինքն՝ այն, որ պատճառական բայերը ունենում են անցողական և անանցողական կիրառություն: Անանցողական կիրառության ժամանակ այս բայերը ցույց են տալիս իրավիճակի փոփոխությունը պացիենտ հանդիսացող արգումենտում: ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում և ուղերձներում ցեղասպանության հետևանքով ստեղծված մահվան իրավիճակը հիմնականում առկայցվում է *kill, massacre, murder, succumb, annihilate* բայերով ներկայացված իրադարձություններով: Այնուհետև ներկայացվում է *փառապանք* իրադարձությունը՝ իրենից սերած ենթաիրադարձություններով՝ *անապահովություն, փառապանք, սով*: Տառապանքը մարդկային դժբախտության արդյունքն է, որը զուգորդվում է ինքնության կորստի, ցավի, աղետի ու վտանգի հետ (insecurity, starvation, misery):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հաշվի առնելով վերաբերյալ տեսություններն ու վերլուծությունները՝ կարող ենք ասել, որ 1915 թվականի իրադարձությունները ներկայացնող բառիմաստների և դրանցից բխող իրադրային կառույցների վերլուծության ընթացքում կիրառվում են վերլուծական մի շարք մոտեցումներ՝ բայերի ենթաիրադրային հատկանիշները վերհանելու համար: Իսկ մեթատրամաբանական այնպիսի գաղափարները, ինչպիսիք են ACT, DO, CAUSE և BECOME պրեդիկատները, ներկայացնում են բառային միավորին զուգորդվող կերպային դասերի ուրվագծումը: 1915 թվականի իրադարձությունները ներկայացնող բառիմաստների ուսումնասիրության լույսի ներքո և բառային (իրադրային) տարրաբաշխման արդյունքում թերևս պարզ ու որոշակի են դառնում խուսանավող խոսույթի առանձնահատկությունները: ԱՄՆ պաշտոնական հայտարարություններում ցեղասպանությունը ներկայացնող բայերը տարրաբաշխվում են բառային այնպիսի միավորների, որոնց ներկայացնող իրադրային կառույցներում արտապատկերված են *կորստի, մահվան, փառապանքի, տեղափոխության* իրավիճակներ արտահայտող միավորներ՝ իրենց ենթաիրադարձություններով, սակայն ստեղծված իրավիճակի պատասխանատուները միանշանակ չեն նշվում: Փոխարենը նշվում են պատմական թվականներ և այլևս գոյություն չունեցող կայսրություն: Ենթադրվում է, որ խոսողն իրազեկված է պատմության անցքերին, և որ հիշյալ թվականներին, հիշյալ կայսրության ժամանակաշրջանում տեղի է ունեցել որոշակի իրադարձություն:

Մեր կողմից ուսումնասիրվող նյութը՝ դիտարկված նման տեսանկյունից, հնարավոր է բնութագրել որպես խուսանավող խոսույթ: Ուսումնասիրելով իրադարձությունների կառուցվածքը և իրադրային կառույցները՝ հնարավոր է նկատել, որ տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են մեկնաբանում իրադարձությունների կառուցվածքը: Գրեթե բոլոր լեզվաբանները իրադրային կառույցների ներկայացման համար օգտագործում են միևնույն վերլուծական օժանդակ պրեդիկատներ (CAUSE-ՊԱՏՃԱՌ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ, BECOME-ԴԱՌՆԱԼ): Սա հաշվի առնելով՝ մենք ևս անմասն չենք մնացել այդ մեթոդից, և ըստ ամենայնի ԱՄՆ քաղաքական պաշտոնական խոսույթի իմաստային առանձնահատկությունների վերլուծության հիման վրա բացահայտ արտահայտում է ստանում ԱՄՆ-ի պետական դիրքորոշումը Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, իսկ իրադարձությունների իմաստաբանության ուսումնասիրությունը և դրա հենքով իրականացրած վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել այս կամ այն խոսույթի՝ տվյալ իրավիճակին համապատասխանող իմաստը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բրուտյան Գ. (1987): Տրամաբանության դասընթաց, 4-րդ Երևան, Երևանի պետ.համալսարան, 4-րդ վերամշ. և լր. հարտ.-Երևանի համլսա. Հրատ, 539 էջ:

2. Davidson D. (1969). The Individuation of Events // Essays in Honor of C.G. Hempel. Dordrecht, էջ 216 –234:
3. Davidson D. (1967). The Logical Form of Action Sentences. // N. Rescher (ed.) The Logic of Decision and Action. Pittsburgh: University of Pittsburgh Press, էջ 81–120:
4. Dowty, D. R. (1991). Thematic Proto-Roles and argument selection Текст. / D. R. Dowty // Language. Ohio: Ohio State University Press, № 67, էջ 547–619:
5. Grimshaw J. (2005). Semantics Structure and Semantics Content in Lexical Representation// in J.Grimshaw Words and Structure, CSLI Publications, Stanford CA, էջ 5-89:
6. McCawley J.D. (1968). The Role of Semantics in a Grammar // Universale in Linguistic Theory. N. Y., էջ 125–170:
7. Rappaport H., Malka, and Levin B. (1998). Building verb meanings. In The Projection of Arguments: Lexical and Compositional Factors, eds. Miriam Butt, and Wilhelm Geuder, Stanford: CSLI, էջ 97–134:
8. Ryle G. (2000). The concept of mind Text. / G. Ryle. Chicago: University of Chicago Press, 2002. p 348 .
9. Tenny C. and Pustejovsky J., (eds) Events as grammatical objects// The converging perspectives of Lexical Semantics and syntax; Stanford, Center for the study of language and information, էջ 510:

Էլեկտրոնային ռեսուրսներ

Stanford Encyclopedia of Philosophy – <http://plato.stanford.edu/>

Thesaurus.com – <http://www.thesaurus.com>

Վերլուծության աղբյուրները

Armenian National Comitee of America (ANCA)– US Presidential Statements

http://www.anca.org/genocideresource/president_statements.php

Armenian National Institute (ANI)–Armenian Genocide Resolutions, Laws and Declarations

http://www.armenian-genocide.org/current_category.7/affirmation_list.html

The Armenian Genocide Museum–Institute–Recognition; States

<http://www.genocide-museum.am/eng/states.php>

Сона Акопян

*Заведующая кафедрой иностранных языков и литературы
Международного Университета Евразия,
Новаторский образовательный фонд, инструктор TOEFL & IELTS,
докторант кафедры английского языка Ереванского государственного
университета
языков и социальных наук имени В. Я. Брюсова,
кандидат филологических наук*

СОБЫТИЙНО–СЕМАНТИЧЕСКИЙ АНАЛИЗ ОФИЦИАЛЬНЫХ ЗАЯВЛЕНИЙ США О СОБЫТИЯХ 1915 ГОДА

Обладая наибольшей властью практически во всех политических позициях государств, США в огромном количестве политических и официальных документах затронули события 1915 года. В рамках теории событий первоначально изучается гипотетическое и субконтекстуальное значение политического дискурса США и его семантическое представление. В настоящей статье предпринята попытка представить события 1915 года в политическом дискурсе в контексте анализа событий. В статье рассматривается понятие сложного события как аналитического инструмента, представляющего собой глубокое событийное моделирование и событийное разложение причинно–следственных глаголов. Предполагается, что статья призвана структурировать политический дискурс США в рамках официальных объявлений и ежегодных заявлений президентов.

Ключевые слова: событие, событийно–семантический анализ, сложные события, причинно–следственная связь, лексическая декомпозиция, маневрирующий политический дискурс, США.

Sona Hakobyan

*Head of the Department of Foreign Languages and Literature at Eurasia International University
Innovative Educational Foundation, TOEFL & IELTS Instructor,
Pursuing Doctoral Degree at the Chair of English Language,
Yerevan Brusov State University of Languages and Social Sciences,
PhD in Philology*

EVENT–SEMANTICS ANALYSIS OF THE USA OFFICIAL ANNOUNCEMENTS ON 1915 EVENTS

Having the greatest power on nearly all states՝ political standpoints the USA has touched upon the events of 1915 through myriad of political and official documents. The suppositional and subcontextual meaning of the USA political discourse and its semantical representation is initially studied in the scope of the

theory of event semantics. The present article attempts to represent the events of 1915 in political discourse within the context of event analysis. The article examines the concept of complex event as an analytical tool, introducing a deep event modeling and event decomposition of causative verbs. Supposedly, the article intends to structure the USA political discourse within the framework of official announcements and annual presidential statements.

Key words: event, event- semantics analysis, complex events, causation, lexical decomposition, maneuvering political discourse, the USA

Հոդվածը ներկայացվել է գրախոսման՝ 2019թ. մարտի 22-ին
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2019թ. ապրիլի 10-ին